# ԼՐՈՅ ԳԻՐ

## ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ — ՆՈՒՄԱՐ. 32

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ՅՈՒԼԻՍԻ 5. ՈՐ Է ՌՄԽԸ ՍԷՓԷՐԻ ԺԹ

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ.


## ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

—

Բարեխնամ Ինքնակալն որ իւրեն աղօթող գիւտուն անձինքներուն վըրայ միշտ գթութիւն ունի, սէֆէրի ամսոյն 8 ին՝ Պէկլէր պէկիի վճարանքը ուրբաթ օրվան աղօթքը կատարելէն յետոյ՝ նոյն օրվան արքայական հանդէսին յատկացեալ պաշտօնատար ծառայներովը՝ ծովեզերեայ պալատը եա դարձաւ. և անկեց ալ իր Թէպսիլի նաւը հեծնելով, Կէօքսու ըսված զուարճալի տեղը գնաց։

Եւ այժմեան դենպետ (չէյխիւլամ) եսէնձի զատէ ապտիւլ Վէհապ էֆէնտիին ծովեզերեայ բնակարանը՝ նոյն տեղին մերձ գըտնըվելով, Ինքնակալն որ ընդ երկայն աւուրս կացցէ, իր բոլոր ծառայից և գիտնոց վրայ ունեցած գթութեանը՝ յիշեալ դենպետին յատուկ հըրավէր խըրկեց, և իր արքայական ներկայութեանը բերել տըվավ. և նստելու ալ հրաման ըրաւ։ Եւ ժամու կէսի չափ հետը խօսելէն յետոյ, փըրլանթի քարերով շինված իր Թագաւորական պատկերն ալ շնորհելով. փառաւորեց։

Եւ նախայիշեալ կերպով երբ կըխօսէին, տէրս վէքիլի Մ.գշէհիրցի Խօճէր էֆէնտիին՝ իր ծովեզերեայ բնակարանը ըլլալը Արքային խօսեցաւ. անոր համար թէ նոյն էֆէնտին՝ և թէ դենպետին փոքր որդին Իլմի էֆէնտին՝ Ինքնակալն իր ներկայութեանը բերել տըվավ. և Արքային ոտքը համբուրեցին։

Եւ այս երկուքն ալ այս կերպով մեծի գթութեան արժանի ըլլալնուն ՚ի զատ՝ գիտութեան վերաբերեալ Արքային մէկ քանի հարցմունքներին ալ վայելելով՝ մեծապէս փառաւորեցան։

—

Եգիպտոսի գավառ քէհեասի հաճի Նէճիպ էֆէնտին իսկըզբաննէ անուն փորձըված և մեծի տէրութե հաւատարիմ անձ մը ըլլալով, Մէհէմէտ ալիին յառաջմանէ ՚ի վեր միջոց միջոց ըրած անկարգ գործքերուն խիստ կընեղանար. հիմա ալ անոր ապըստամբական գործքերէն եա մնալուն համար, իր բարի դիտաւորութեանը տըված խրատներուն չըլլալուն պատճառով՝ շատ անէծքներ կարդացերէ։

Եւ այս հաճի Նէճիպ էֆէնտիին յանձնըված ուրիշ գավառ քէհեաութե պաշ-

ժթ

տօնները՝ միայն ժամանակիս բերմունքին նայելով ուրիշի տրուեցաւ · ոչ թէ այս Մէհէմէտ ալիին դիպուածքին պատճառով՝ Ինքնակալը իր բարի հայեցողութիւները և խնամքը անոր վրայէն վերցուց ։

Եւ այս անգամ՝ արքունի բանակին մէջը մէկ քանի հարկաւոր գործքերու վրայ տէրութ̃ մեծամեծներէն քանիմը՝ անձանց պիտանաւորութ̃ գտնըվելնուն կարգը՝ այս ալ այն կողմերուն տեղեակ և ծանօթ ըլլալուն համար հոն խըրկըվեցաւ ։

Որովհետև մեծի տէրութ̃ կողմանէ կարգադրեալ բանակին և այսչափ նախապատրաստութ̃ միտքը և դիտաւորութիւը՝ միայն Մէհէմէտ ալին և անոր տղայն Իպրահիմը պատժել է · անոր համար թէ այս երկուքին ականայ հնազանդօղները՝ և թէ անոնց սուտ և շինծու խարդախ խօսքերուն խաբվելով կողմնակալնի պէս եղօղները՝ ճշմարիտ սրտով զղջան , և մեծի տէրութէը ապավինին , այնպիսիներուն՝ արքայական գթութ̃ դուռը բաց ըլլալը յառաջմանէ ալ ծանուցված է ։

Եւ վերոյիշեալ Նէճիպ էֆէնտին ատկէց յառաջ քանիմը անգամ Եգիպտոսի և Հիճազին կողմերը գացած ըլլալով , այն տեղի բնակիչներուն հետը ծանօթութի ունի ։

Եւ այնպիսի զղջացօղներէն արքունի բանակը եկօղ ապաւինօղները՝ կարելի է որ Անատօլուի կողմին ընդհանուր հրամանատար Հիւսէյին փաշային ահաւորութեն վախնալով՝ կասկածին · բայց Նէճիպ էֆէնտիին հոն գըտնըվելովը՝ այնպիսիներուն ապահովութը պատճառ ըլլալը յայտնի է · և անոր գիտցած նախապատրաստական գործքերուն օգտակար ըլլալն ալ խորհված է ։

—

Պօսնայի նահանգը յառաջմանէ թէպէտ բդեշխի ներքև կըկառավարվէր · բայց ժամանակէմը 'ի վեր է քանիմը պատճառով նոյն նահանգին մէջը գտնվածը՝ այն տեղի բդեշխի գըտնըվօղներուն ծախքին բաւական չէր ըլլար · անոր համար՝ ատկէց յառաջ մուգաթաաթի խազնէյին կապելով , Հասան փաշայ զատէ Ալի պէկին վրայ միւսէլլիմութիւը հաստատվեցաւ ։

Եւ այն միւսէլլիմն ալ մինչև հիմա թէ և աղէկ կըկառավարէր , սակայն հիմա Պօսնայի և Թարսուսի ծովեզերքը և թէ այն կողմերուն ցամաքային անցքերը ըստ արժանոյն պահպանելը պէտք եղաւ ։

Ուստի թէ Պօսնայի միւսէլլիմ Ալի պէկին՝ և թէ Թարսուսի միւսէլլիմ խօճակեան Ռաղիպ էֆէնտիին՝ անոնց կառավարութ̃ ներքև գըտնըված տեղերը ինչպէս որ պէտք է , այնպէս պահպանելու կարօղ չըլլալնուն համար՝ նոյն նահանգի մէջը վօքքի տէր և գործունեայ մուհաֆըզ մը գըտնըվիլը հարկաւոր եղաւ ։

Այս արքունի բանակին հետ գըտնըվօղ միրի միրաններէն Նիյէպօլիի մուհաֆըզ Սատըգ փաշային՝ քաջ և խոհեմ անձմը ըլլալով , իսկոյն այս գործքին յարմար տեսնըվէր է ։

Ուստի Անատօլուի կողմին ընդհանուր հրամանատար Հիւսէյին փաշայն արքունի բանակէն՝ նոյն փաշային բաւական զօրք տալով Պօսնայի մէջ նստեցնելը , և ինք ալ դէպ՚ի յառաջ երթալը , և յիշեալ Ալի պէկին ալ արքունի բանակին պիտոյքներուն համար ցոյց տըված ջանքին և աշխատանացը փոխարէն՝ գաբուճի պաշիութ̃ աստիճան շնորհվիլը՝ և մնալու համար արքայանիստ քաղաքը խըրկելը գըրած էր ։

Եւ Թարսուսի նահանգն ալ իսկըզբաննէ անոր Պօսնայի նահանգին հետ կըցվածին ըլլալով , մանաւանդ այն տեղի պահպանութի ալ Անատօլուի ընդհանուր հրամանատարի կողմանէ՝ յիշեալ փաշային յանձնըված էր ։

Ուստի նոյն Թարսուսի միւսէլլիմին ալ պէտք չըլլալէն՝ Պօսնայի և Թարսուսի նահանգները մէկ տեղ՝ Նիյէպօլիի մուհաֆըզութէը կցելով , մուհասըլի կերպով յիշեալ փաշային շնորհվիլը Արքայն հրամանն ըրաւ ։

Եւ սէֆէրի ամսոյն 9 ին շաբաթ օրը՝ անոր գափու քէհեասի եղօղ արքունի դի-

վանին նշանձի վէքիլի Ալի Էֆէնտիին կապույ հագուցին. և այն փաշային իր առջի ունեցած Նիկէպօլիի մուհաֆըզութիւնը՝ Պօտանայի և Խիտրուսի մուհասսըլութիւնը՝ միանգամայն կցորդելով, այս շնորհումին հրատարակվիլը 'ի գործ դրվեցաւ:

—

Արքունի բանակին պիտոյքները առնելու և բերցընելու համար՝ Անատօլուի կողմերու քաղաքներէն բերել տըրված ձիերուն և սայլերուն (առապաներուն) մէկքանին կարելի է որ ճանապարհին սպառին (թէլէֆ ըլլան). ուստի անոնց տէր եղողներուն՝ փոխարէնը հատուցանելով, բարեբաղդ Ինքնակալին կենացը համար՝ բոլոր աղքատներուն և տկարներուն կողմանէ օրհնութի և բարեմաղթութի ըլլըվիլը՝ Անատօլուի ընդհանուր հրամանատարին կողմանէ ազդարարութի եղեր է:

Յիրաւի այնպիսի սպառվածներուն կարելի ըլլալուն համար՝ յատուկ մարդիկներ դրվիլը, և անոնց գինը առուգելով՝ տէր եղողներուն ձեռքը տըրվիլը, արդարադատ Ինքնակալին բարի կամեցողութենէն յառաջ եկած է:

Սակայն Արքային հրամանին կերպովը՝ յառաջմանէ այն սպառվածներուն որքանութիը իմանալ պէտք ըլլալով, նախ՝ որպիսութիը առուգէն. և ապա ինչպէս որ հարկաւորի՝ այնպէս 'ի գործ դրնէն:

Անոր համար՝ այս անգամ այն կողմերը հրովարտակներ խըրկըվեցաւ. և սպառվածներուն տեսակը և որքանութիը և գինը յայտնելով՝ ցուցակ գրերը (տէֆթէրները) խնդրըվեցաւ:

—

Արքայական գթութէն մըրխմըրանութի շնորհ եղած Խաթէվլիձէցի Ալի փաշային՝ Պօսնայի վըզիրմունքին սկիզբէն մինչև որ արքային հովանաւորութիը խաղաղեցաւ, հզօր տէրութեը հաւատարմութեամբ ծառայութիւն ըրաւ:

Թէ Պօսնայի նախկին բդեշխ Ալի Նամիդ փաշային հետը՝ և թէ ուրիշ պաշտօնատարներուն հետը՝ եպարքոսին կամացը համեմատ շարժեցաւ. և անձը չըխնայելով, ապստամբները զսպելու և պատժելու հետևեցաւ. և ասոր այսպիսի աղէկ ծառայութիւնները քանիցս անգամ եպարքոսը վկայեց:

Ուստի Ինքնակալն իր բնական ունեցած ողորմած բնութը որ հաւատարիմ և գթութ արժանաւոր ծառաները միշտ կըփառաւորէ, յիշեալ փաշային վրայ ալ իր խնամքը աւելցընելով՝ էլմաս նշանմը պարգևելու հրաման ըրաւ. և իսկոյն նշանը արքունի զարպխանէն շինվեցաւ. և այն փաշային տըվելու համար եպարքոսին կողմը խըրկըվեցաւ:

Այս մեծ պարգևին արժանի ըլլալը զատ պարծանքը ըլլալով, հաւատարմութի ցոյց տվողներին ալ արքայական այսպիսի շնորհումը տեսնալէն զուրկ չըմնալնին յայտնի է:

—

Սանայի և Տումլուի և թէ ուրիշ պէտք եղած տեղերուն մէջը շինվածքներուն հաստատութի տըրվելու համար՝ յատուկ երկրաչափներ (մուհէնտիսներ) և շինվածապետի ճարտարապետներ (մէյմարի խալիֆաներ) խըրկըվեր են:

Նոյ անոնք ալ որոշումն տեղերուն (քէշֆ) և նկարագիր (ռէսիմը) քաշէր, ցուցակ գրերը բերեր մատուցեր են. և նոյն գրերոյն նայելով մեծ շինվածքներ ըլլըվելը իմացվեր է. Նոյ այս գործքին յարգի և երևելի անձինքներէն շինվածքի գլուխ (պինա էմինի) դրվելով, նոյն գործքին գլուխուն մը տըվիլը հասկցվեր է:

Ուստի հրամանով Ինքնակալին՝ Տումլուի շինվածքներուն հաստատութիը՝ մեծի տէրութեէ գլխաւոր անձինքներէն յառաջմանէ չավուշ պաշի հաճի Աթաուլլահ Էֆէնտիին յանձնըվեցաւ. և ողորմութէն այ 1248 թըվին եղած արքայական շնորհումներէն տըրելու համար՝ ժամանակաւոր Տէֆտէր Էմինութեան պաշտօնն ալ անոր շնորհվեցաւ:

Նաեւ Մառնայի շինուածքներուն հաստատութեան համար ալ՝ արքունի առաջին միրախօռ Մէհէմմէտ աղային միրախօռութիւնը վրայն մնալով, նոյն տեղին շինուածքին գըլխաւորութիւնը (պինաէմինութիւնը) շնորհվեցաւ։

Նաեւ սէֆէրի ամսոյն 9 ին շաբաթ օրը՝ ասոնց կապայ հագուցին. և հետերնին ալ վարպետ երկրաչափներ դըրվելով խըրկըվեցան։

—

Ասկէց յառաջ արքայանիստ քաղաքի միւտէրրիս և Էրզըռումի դատաւոր եղպար Թացի սէյիտ Հիւսէյին էֆէնտին՝ որ նոյն քաղաքի մէջը իր տեղը նայիպ դընելով, ինքը շատ ժամանակէ 'ի վեր դատաստանական գործոց մէջ էր. և հիմա ալ Իւսկիւտարի մեհքեմէին նայիպ էր։

Բայց ինքը գիտուն անձմը ըլլալուն համար՝ բարի հայեցողութեամբ Ինքնակալին Պօսնային խռովութիւնը որ այժմ բոլորովին բարձրված է, այս սէֆէրի ամսոյն սկիզբէն տիրելով, Պօսնային դատաւորութիւնը Իւսկիւտարի ատիճանով նոյն էֆէնտիին շընորհվեցաւ։ Նաեւ մինչև նոյն քաղաքը երթայ, Էրզըռումի դատաւորութիւնը իր վրայն մնալով, Ինքնակալին գթութեանը արժանի եղած է։

# ԳՈՐԾՔ ԶՕՐԱՑ

—

Թագաւորին բարի յիշատակը եղած մանսուրէ հեծեալ զօրաց գունդերուն մէջ 'ի գործ դըրվածին պէս՝ մանսուրէ ձիաւոր զօրքերուն ամէն երկու գունդերն ալ կառավարելու համար՝ վրայնին գաւառապետ (միրլիվա) դըրվելը կանոն եղած էր։

Ուստի արքունի մապէյնճիութէ եղած Սայիտ էֆէնտին ամէն կերպով խոհեմ անձմը ըլլալով ձիաւոր զօրք կըրթելու և կարգադրելու կատարեալ ճարտարութիւն ունենալը՝ Ինքնակալն իմացած էր. այն պատճառաւ անոր գունդերը վերջը կարգի դընելու դիտաւորութեամբ՝ միայն թէ հիմա յաջողութեան ալ Անատօլուի կողմը խըրկըվելու գնդապետ Շէրիֆ պէկին կառավարութեան ներքևը եղած արքունի ձիաւոր զօրաց երկրորդ գունդին հետ մէկ տեղ՝ գընդապետ Րիզա պէկին կառավարութեան ներքևը եղած Թիմարլու ձիաւոր մանսուրէ զօրաց երրորդ գունդին՝ որ ասկէց յառաջ ալ ըսված Լրագրին մէջը Իւսկիւտար անցնիլը յիշված էր, հիմա յիշեալ Սայիտ էֆէնտին փաշայութեան ատիճանով սէֆէրի ամսոյն մէկին ուրբաթ օրը հրամանով Ինքնակալին նոյն գունդերուն՝ առաջին գաւառապետ դըրվեցաւ։

Նաեւ նոյն էֆէնտին այսքան ժամանակ Թագաւորին մերձաւոր ծառայութեցը մէջը գըտնըված ըլլալուն համար՝ իր ատիճանին յատուկ փողպատը ոսկեթել բանված հարվանի՝ Արքային առջևը հագուցին. և փառաւոր նշանմըն ալ շնորհվելով, Սէրասքէր փաշային կողմը խրկվեցաւ։

Բայց թէ Սայիտ փաշային առջին գաւառապետութեան պաշտօնին համար զատ պէտք եղած հրովարտակը՝ և թէ Րիզա պէկին իր կառավարութեան ներքևը ունեցած գունդին հետ՝ յիշեալ փաշային լիվային ներքևը գըտնըվելով, անոր պաշտօնին ալ զատ պէտք եղած հրովարտակը տըրվելու համար՝ Սէրասքէր փաշայն իր գրութեամբը Թագաւորէն հրաման խնդրեց։

# ԳՆԱՀԱՏՈՒԹԻՒՆ

—

Մուհարրէմի ամսոյն 24 էն՝ մինչև 29., դարձեալ սէֆէրի ամսոյն 1 էն՝ մինչև 7, թէ միրիի մուպաեաներէն և թէ բոյինձի վրայ վաճառեալ զահրէներէն ըլլալով, 26 նավով արքունի ամպարը եկածներուն որքանութիւնն է.

| Ցորենի՝ քիլէ | Գարի՝ քիլէ |
|---|---|
| ١٠٩٣٥٨. | ٢٥٨٦٦ |

Յիշեալ գաւառներէն Տօպրիճէի բնակիչներուն կողմանէ եկածներուն որքանութիւնն է։

| Ցորեն՝ քիլէ | Գարի՝ քիլէ |
|---|---|
| ٢٧٥٤٩ | ٣٢١١ |

Յիշեալ ժամանակներուն մէջը՝ արքունի ամբարէն տըրված գաւառներուն որքանութիւնն է։

| Ցորեն քիլէ | Գարի քիլէ | |
|---|---|---|
| ·٢٦٨٥ | ····· | Խարճի փուռին հարկաւորութենը։ |
| ·٦··· | ····· | Հարէմէյնի վագըֆներուն իմա"։ |
| ····· | ·٧··· | Ղալաթայու արքունի պալատին։ |
| ·٣··· | ·١··· | Արքունի զօրաց թայինաթին։ |
| ····· | ·٣··· | Խաս ձիաւոր զօրաց ձիերուն։ |
| ····· | ·٢··· | Թիմարլու ձիաւոր մանսուրէ զօ- |
| ····· | ····· | րաց ձիերուն։ |
| ····· | ·١··· | Ձիաւոր մանսուրէ զօրաց ձիե"։ |
| ·٥٢٥· | ·١٧٥· | Մանսուրէ զօրաց թայինաթին։ |
| ·١٧·· | ··٣·· | Թօփխանայի թայինաթին։ |
| ····· | ··٨·· | Խումպարախանայի ձիերուն։ |
| ٢٥··· | ·٧··· | Հացագործներուն։ |
| ١٢··· | ····· | Ունճիներուն։ |
| ٥٥٦٣٥ | ٢٣٨٥· | |

Յիշեալ ժամանակներուն միջոցը՝ Թեքիրտաղին, Էրէկլին, Մուտանեայի, Պուրղազի, Ահեօլուի, և Անքիքլար ըսված նաւահանգիստներէն՝ վաճառականի և նաւապետի ապրանք ըլլալով Ունխափանը եկածներուն որքանութիւնն է։

| Ցորեն՝ քիլէ | Գարի՝ քիլէ | Գօգօրօզ՝ քիլէ |
|---|---|---|
| [illegible]٣٨٠ | ٤٣٤٠٧ | ٣١٦١ |

| Կօրէկ՝ քիլէ | Ալուր՝ քիլէ |
|---|---|
| ٧٤١٣ | ٩٨٩٨ |

---

Անցեալ տարի Տօպրիճէի բնակիչներուն մայր դրամի (սերմայէի) կերպով շատ ըստակ տըրված էր․ անոր համար նոյն բնակիչները գթած Ինքնակալին հովանաւորութէ ներքեւը իրենց վարուցանը (չիֆթ չուպուխը) կարգի դնելով, իրենց առջի աստիճանը հասեր են։

Ու այս տարի ալ անցեալ տարվան վրայ կրկնապատիկ ցորեն գտնալու դիտաւորութէ հունտ ցանած ըլլալնուն համար՝ տեղը ցորեն տալու պայմանով իրենց կողմը բաւական մանգաղի (օրախի) ըստակ խըրկվիլը՝ յայտարար գըրերով (իլամներով) իմացուցեր են։

Աստի անցեալները որ անոնց կողմը 900 քեսէ խըրկվեր էր, հիմա անկէ ՚ի զատ այս անգամ հրամանով Ինքնակալին մանգաղի ըստակ ըլլալու համար՝ զահրէի խազնէյէն 1000 քեսէ ալ սուրհանդակի (թաթարի) հետ նոյն բնակիչներուն խըրկվեր է։

## ԳՈՐԾՔ ԱՐՏԱՔԻՆ

Յետ որ 1831 ու նոյեմբերի 3 էն՝ Ֆլէմէնկի ու Պէլճիգայի երկիրներուն կարգադրութէը վրայ՝ հինգ տէրութեց երեսփոխանները որ կը խօսէին, հիմա յետ որ 1832 յունվարի 19 էն, այսինքն՝ 1247 Հիճրէին շապանի 28 էն, վերոյիշեալ երեսփոխանները՝ նոյն խօսքերուն վերջաւորութէ տալով, իրենց պաշտօնագրերն հարկ եղած վկայականներուն համար՝ Լօնտրա քաղաքը Ֆօրէյնօֆիս ըսուած տեղին խօսակցութէ ժողովին մէջը գումարվեցան։ Ու այն խօսքերուն վախճանը որ յետոյն ու հինգերորդ պաշտօնեաներուն արձանագրութէ մէջը գրված էր, անոնց համառօտ թարգմանութիւնն է։

---

Հինգ տէրութեց երեսփոխանները յամին 1831 և դեկտեմբերի 35 ին՝ վախճան տըրված յիսուն և չորսերորդ արձանագրութիւնը ՚ի գործ դնելու մտօք՝ ժողովին մէջը գումարվեցան․ և երբոր խօսակցութեան սկսան, Նէմցէի և Պրուսիի և Ռուսի երեսփոխանները անցեալ նոյեմբերի 3 ին ստորագրված պայմանագրին վկայականները ըստ կանոնի փոփոխակի տալու համար՝ դեռ իրենց թագաւորներուն կողմանէ հրաման եկած չըլլալը ծանուցին։

Ու եթէ միւս տէրութիւնները հիմա իրենց վկայականները տալու ըշտապին, իրենց ստորագրութէ տեղերուն բաց մնալը խնդիրը ըրին․ և այս խնդրվածքին Ֆրանսայի և Ինկիլթէրայի երեսփոխաններն ալ հաճեցան․ և ըսին, թէ այս վկայականներուն փոփոխակի տալը՝ միաբանեալ տէրութեց կողմանէ միանգամայն ՚ի գործ դըվիլը մեր թա-

գաւորներուն կամքն էր · բայց ուշանալով կարելի է որ մէկ քանի կարծիքներ պատահի · և այն կարծիքները ամմէնուն խաղաղութե̃ը վնաս բերէ ։

Նաև այս մտածմունքներուն պատճառովը իրենց տէրութե̃ը կողմանէ գալու հրամանին չսպասելով՝ ուրիշ վկայականներ փոփոխակի միմեանց տալու հարկաւոր համարեցան ։ Նաև մտածեցին որ հինգ տէրութ̃իւն ալ միասիրտ և միաբան եղած են , և այս բանէն պակասութիւն չըլլար · մանաւանդ ամմէնուն խաղաղութե̃ը պատճառ կրնայ ըլլալ ։

Ասոր Նէմչէի և Պրուշի և Ռուսի երեսփոխաններն ալ՝ այս խօսքերուն պատասխան տուվին , թէ Ֆրանսայի և Ինկիլթէրայի տէրութիւններուն այս պատշաճ կերպերը ընտրելէն , և իրենց երեսփոխաններուն ալ նոյն կերպերը ծանուցանելէն , թէ իրենք և թէ իրենց թագաւորները խիստ ուրախ են , մանաւանդ այս միաբանութ̃ կապը հաստատելու և պահպանելու նմանապէս իրենք ալ կըցանկան · և այս կերպ նախապատրաստութիւը ամմէնուն խաղաղութե̃ը պատճառ ըլլալը ճշմարտելու կարող ըլլալնին իմացուցեր են ։

Նաև այս արձանագրութե̃ մէջը գրվածին նայելով , այսպէս վախճան տրված է · որ հինգ տէրութե̃ց երեսփոխաններուն մէկ քանիին՝ վկայականները փոփոխակի տալերնուն համար մինչև հիմա իրենց թագաւորներուն կողմանէ հրաման եկած չէ · և մինչև գալու ըլլայ , արձանագրութիւը բաց մընալով՝ խօսակցութե̃ ժողովին մէջը հինգ տէրութե̃ց երեսփոխաններուն կողմանէ կատարումը տրվեցաւ ։

Նաև ժողովին մէջը գումարվելու ատեննէին , նաև Պէլճիգայի երեսփոխանին ալ դադարութի̃ եղաւ · և այն ալ այս արձանագրութե̃ը նէրքևը կցված իրեն յայտարար գիրը ժողովին տրվելով · և յամի տն 1831 նոյեմբերի 3 ին ստորագրված պայմանագրին վկայականները՝ Ֆրանսայի և Ինկիլթէրայի և Պէլճիգայի երեսփոխաններուն մէջը փոփոխակի տալով , խօսակցութե̃ ժողովին վախճան տրվեցաւ ։

### Պէլճիգայի երեսփոխանին՝ ժողովին տրըված իրեն յայտարար գրին համառօտ թարգմանութիւնն է ։

Նէմչէի և Պրուշի և Ռուսի երեսփոխանները պէտք եղած վկայականները փոփոխակի տալերնուն համար՝ իրենց թագաւորներուն կողմանէ դեռ հրաման չըգալը , և այն պատճառով արձանագրութե̃ը բաց մնալը , և հինգ տէրութե̃ց երեսփոխաններուն կողմանէ իրենց կանչըվիլը , Պէլճիգայի երեսփոխանը յիշելէն յետոյ՝ կըյայտնէ · թէ նախայիշեալ թագաւորներուն կողմանէ վկայականներուն աներկբայ գալուն՝ ինքը և իր թագաւորը հաստատ յոյս ունին ։ Ասոր նոյն վկայականները գալու կերպովը՝ ինքը իր թագաւորին կողմանէ կընդունի ։

—

### Ֆրանսայի թագաւորին կողմանէ յամի տն 1831 դեկտեմբերի 12 ին տրըված վկայականին՝ համառօտ թարգմանութի̃ն է ։

Մենք Լուվիս Ֆիլիպ և ուրիշ թագաւորական մեծ մակ անուններով Ֆրանսայի թագաւոր ենք , կըյայտնենք · որ 1831 նոյեմբերի 3 ին՝ Լոնտրա քաղաքը յայտնըված տէրութիւններուն երեսփոխաններովը ժողովին մէջը ստորագրված պայմանագըրին՝ և անոր մէջը բոլոր պարունակված կանոններուն լաւ նայելով , հաճութի և հաւանութի ցոյց տված ենք ։

Ասոր թէ մեր կողմանէ , և թէ մեր յաջորդներուն կողմանէ կատարել ընդունելի եղած է · անոր համար այն կանոններուն դէմ բնաւին հակառակ գործք մը չընել , և ընել չտալու պայմանով , ահա այս մեր ստորագրված ձեռագիր վկայականը՝ թագաւորական կնքով կնքեցինք ։

—

### Ինկիլթէրայի թագաւորին կողմանէ յամի տն 1831 նոյեմբերի 24 ին տրըված վկայականին՝ համառօտ թարգմանութի̃ն է ։

Մենք՝ չորրորդ Կիլլյում և ուրիշ թագաւորական մեծ մակ անուններով Ին-

կիլթերայի թագաւոր ենք, կը յայտնենք․ որ 1831 նոյեմբերի 3 ին՝ Լօնտրա քաղաքը յայտնըված տէրութիւններուն երեսփոխաններովը ժողովին մէջը ստորագրըված պայմանագրին, և անոր մէջը բոլոր պարունակըված կանոններուն լաւ նայելով, հաճութիւն և հաւանութիւն ցոյց տըված ենք։

Աւստի թէ մեր կողմանէ, և թէ մեր յաջորդներուն կողմանէ կատարել ընդունելի եղած է․ անոր համար մէկ պատճառով մը նոյն կանոններուն դէմ եթէ հակառակող գըտնըվի, մեր կարողութեանը և ձեռքերնուս եկածին չափ թող չըտալու և չընդունելու պայմանով, ահա այս մեր ստորագրըված ձեռագիր վկայականը՝ արքայական կնքով կնքեցինք։

—

Պելճիգայի թագաւորին կողմանէ յամի տն 1831 նոյեմբերի 10 ին տըրված վկայականին՝ համառօտ թարգմանութիւնն է։

Մենք՝ Լէօփոլտօ անուն Պելճիգայի թագաւոր ենք, կը յայտնենք․ որ 1831 նոյեմբերի 3 ին՝ Լօնտրա քաղաքը յայտնըված տէրութիւններուն երեսփոխաններովը ժողովին մէջը ստորագրըված պայմանագրին և անոր մէջը բոլոր պարունակըված կանոններուն լաւ նայելով, հաճութիւն և հաւանութիւն ցոյց տըված ենք։

Աւստի այս կանոնները ամէն կերպով անխախտ պահելու ուխտած ըլլալնիս յայտնելու համար, ահա այս մեր ստորագրըված ձեռագիր վկայականը՝ արքայական կնքով կնքեալ տըվինք։

—

Պելճիգայի կառավարը՝ յամի տն 1832 յունվարի 22 ին՝ Պելճիգայի Պերուքսել ըսված արքայանիստ քաղաքին մէջը ընդհանուր ժողովմը ընելով, վերյիշեալ վկայականներուն օրինակները կարդացուց, և ամէնուն յայտնեց։

Եւ նոյեմբերի 3 ին եղած պայմանագիրը՝ Ֆրանսայի և Ինկիլթերայի թագաւորներուն կողմանէ ստուգըված և հաւանութիւն ցոյց տըրված ըլլալով, ամենևին աւըրվելու և փոփոխվելու կերպերը չըմնալը մըտածեց։ Եւ այս հարկաւոր մտածմունքին՝ նաև ժողովին մէջը եղողներին ալ իր հետը միաբան ըլլալուն յայս ունենալը՝ Գազէթաներուն մէջը գըրված է։

—

Վկայականներուն փոփոխակի տըրվելուն արձանագրութիւնը յայտնող թղթին օրինակն է։

—

Ռուսի և Նէմչէի և Ֆրանսայի և Ինկիլթերայի և Պրուսիայի տէրութիւններուն կողմանէ՝ Պելճիգայի երկիրը ինքնագլուխ տէրութիւններուն կարգը մըտնալու և նոյնանունովը ընդունելու համար, այն հինգ տէրութեանց և Պելճիգայի տէրութեան մէջը՝ յամի տն 1831 նոյեմբերի 3 ին՝ Լօնտրա քաղաքը հաստատըված և ստորագրըված պայմանագրին վկայականները, և պայմանագըրին ներքևը վերադիր եղած երկու կողմին յայտարար թղթերուն փոփոխակի տըրվելուն համար՝ ի ներքոյ ստորագրող Ռուսի և Պելճիգայի երեսփոխանները մէկ տեղ գումարվեր են․ և յիշեալ վկայականները և յայտարար թղթերը բացեր կարդացեր են։

Եւ սովորական կերպով փոփոխակի տալու պատրաստ ըլլալնին հաստատեր են․ և այս ներկայ եղած որպիսութիւնը յայտնող գիրը՝ իրենց ձեռօքը ստորագրեր, և յատուկ նշան ունեցող կնքոմնին կնքեր են։

—

Յամի տն 1832 ապրիլի 22 ին՝ Լօնտրայի մէջ հաստատըված յիսուն և ութերորդ կոնանագրին համառօտ օրինակն է։

Հինգ տէրութեանց երեսփոխաններուն խօսակցութեան ժողովին մէջը ներկայ գըտնըված ժամանակնին, Ռուսի երեսփոխանները խօսակցութեան ըսկիզբը ըրին․ և յամի տն 1831 նոյեմբերի 3 ին՝ հաստատըված պայմանագրին վերաբերեալ վերջին պատվէրները՝ որ Ռուսի տէրութեանը կողմանէ գալուն

կըսպասէին, եկած ըլլալը իմացուցին · և նոյն պայմանագրին վկայականները փոփոխակի տալու պատրաստ ըլլալնին յայտնեցին · և յետոյ Ռուսի կայսեր վկայականը տըվին ։

Նոյն թըղթին մէջը որոշակի գրվիլը ծանուցին, թէ իրենց կայսրը յանձնառու եղեր է, որ այսուհետև Ֆիլէմէնկը և Պէլչիգան հաստատուն կարգի մէջ դընէ, և երկու կողմին հաճութը միջոցնին գտնայ, և կատարումը հասցնէ · և այս բանս յայտնելու և իմացընելու երեսփոխան և հրամանատար ենք ըսելով խօսքերնին վերջացուցին ։

---

Պէլչիգայի երեսփոխանին խօսուած յայտարար Թղթին օրինակն է ։

Ռուսի երեսփոխաններուն կողմանէ տըրված վկայականին մէջը գրուածքը՝ երբոր Պէլչիգայի երեսփոխանը իմացաւ, ասանկ խօսեցաւ ։ Պէլչիգայի և Ֆիլէմէնկի տէրութիւնները միաբանութ̃ դէմ առ դէմ՝ երկու կողմին օգտակար և հաճելի կերպովը այս գործը կատարել կարող են ։

Նաև պայմանագրին 24 կանոնին մէջը գըրված քանիմը դըժվար իմանալու և մթին խօսքերուն համար՝ թէ և երեսանց ընդդիմութի̃ ցոյց չըտոյ, բայց այսու ամ̃իւ թէ այս գործքը և թէ ուրիշ ամէն գործքերը կարգի դնելու աղագաւ՝ հինգ տէրութիւնները Պէլչիգայի տէրութեանը համար պատշաճ տեսած ուխտ և դաշինքները՝ Պէլչիգան ընդունելէն չըհրաժարիր և ետ չըկենար ։

---

Այս բանս թէև նախայիշեալ կերպովը եղած է · բայց Լօնտրա քաղաքը հրամանատարութ̃ կեցող Պէլչիգայի երեսփոխանը՝ մայիսի ամսոյն մէջը՝ Պէլչիգայի տէրութ̃ Պէրօգսըլա ըսված արքայանիստ քաղաքը հասածին պէս, իսկոյն արքային կողմանէ կանչըվեր է ·

Այս Պէլչիգայի երկրին մէջը՝ ուժերնին շատցընելու պատրաստութ̃ը՝ կատարեալ ջանք ըրեր են · և ամրանքի տէր եղողներէն և մեծատուններէն շատ սատակ փոխառեր են · և պատրաստ ունեցած պատերազմական զօրքերուն վրայ 25 հազար մարդ և հինգ թախըմ թնդանօթի գունդեր աւելցընելով՝ ուժերնին շատցուցեր են ։

Նաև Պէլչիգայի ազգին վը̃ նորէն բեռ մը դըրվելու ըլլայ, ահա հրացանը թևին տակը պատրաստ ունի · Ֆիլէմէնկը անոր դէմ ելլալու կարող չէ · ամէն վէճը և կռիվը թուրը և բաջութ̃ը պիտի վերջացընէ ։ Պէլչիգայի Գազէթաներուն մէջը ասանկ գըրված է ։